

# Տուրիզմ 1

Ինչպես հիշում եք, Հայկը դեռ մարզային փուլին գնում էր դպրոց, իսկ հիմա արդեն միայնակ պետք է գնա ճանապարհորդության: Հայկը պլանավորում է այցելել իրարից տարբեր  $n$  տեսարժան վայրեր:

Տեսարժան վայրերը համարակալված են ից  $n$  թվերով, և Հայկը պետք է այցելի դրանք ճիշտ նույն հերթականությամբ: Մեկ օրում Հայկը կարող է այցելել ամենաշատը  $k$  տեսարժան վայրեր և ցանկանում է պլանավորել իր ճանապարհորդությունն այնպես, որ ծախսած օրերի քանակը լինի հնարավորինս քիչ:

Տեսարժան վայրերից յուրաքանչյուրը ունի գեղեցկության չափանիշ, որոնք ձեզ տրված են: Հայկը ամեն օր ստանում է իր այցելած տեսարժան վայրերի գեղեցկության չափանիշներից առավելագույնին համարժեք հաճույք: Ձեր խնդիրն է պլանավորել Հայկի ճանապարհորդությունն այնպես, որ նա այդ ճանապարհորդությունից ստանա հնարավորինս շատ հաճույք, այսինքն բոլոր օրերում ստացած հաճույքների գումարը լինի հնարավորինս մեծ:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է երկու բնական թիվ՝  $n$  և  $k$  ( $1 \leq k \leq n \leq 300$ ). տեսարժան վայրերի քանակը և օրվա ընթացքում առավելագույն տեսարժան վայրերը, որոնք Հայկը կարող է այցելել:

Հաջորդ  $n$  տողերից յուրաքանչյուրում տրված է մեկ բնական թիվ՝  $a[i]$  ( $1 \leq a[i] \leq 10^9$ ).  $i$ -րդ վայրի գեղեցկության չափանիշը:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ առավելագույն հաճույքը, որը Հայկը կարող է ստանալ:

## Օրինակ

### Մուտք Ելք

```
5 3
      12
2 5 7 1 4
```

### Բացատրություն

Հայկը ցանկանում է այցելել բոլոր տեսարժան վայրերը հնարավորինս քիչ օրերում, և նա այս օրինակում կարող է դա անել 2 օրում.

- Առաջին օր. Հայկը կայցելի առաջին երկու տեսարժան վայրերը՝ ստանալով  $\max(a[1], a[2]) = 5$  հաճույք,
- Երկրորդ օր. Հայկը կայցելի մնացած երեք տեսարժան վայրերը՝ ստանալով  $\max(a[3], a[4], a[5]) = 7$  հաճույք: